

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԳՅԱՆ

XVI Դ. ՕՍՄԱՆԵՐԵՆ ՄԻ ՎԱՎԵՐԱԳԻՐ

Ֆրանսիացի արևելագետ Ժ.Լ.Բակե-Գրամոնյի կողմից Ստամբուլի Մինիստրների խորհրդի արխիվում (Başbakanlık Arşivi), Ֆեքետի ֆոնդում 134 համարի տակ պահվող վաստաթղթի հրատարակմամբ գիտական շրջանառության մեջ դրվեց XVI դ. առաջին կեսի Սամցխեի աթաբեկությանը (Սաաթաբագո) վերաբերող պատմական մի վավերագիր, ուր, մասնավորապես, շրջագծվում են աթաբեկ Ղուարդուարեն III-ի (Ղուրդուրայի) իշխանապետության կազմ ընդգրկված տարածքների սահմաններն ու տրվում տեղի ավատատիրական տների ազգակցական կապերի համառոտ պատկերը¹:

Վավերագիրը հետազայում ևս շարունակեց մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում և համանման այլ նյութերի հետ մեկտեղ դարձավ առանձին քննության առարկա²:

Փաստաթղթում առկա հաղորդումների հետ ծանոթությունը ցույց է տալիս, որ այն առանձնակի կարևորություն ունի նաև հայագիտության համար. քանի որ ներկայացնում է Դիարբեքիից Ճսպաղջուրի, Մուշի, Բասեսանի հովտի, Թոքրումի, Օլթիի (Ուղթիք), Մամուրվանի, Բանակի և Արդահանի անցումով մինչև Ախալցխե և հարակից շրջաններ տանող հիմնական ճանապարհներն ու ուղիները, տալիս Այրարատի, Տայքի և Գուգարքի առանձին բնակատեղերի ու վայրերի աշխարհագրական տեղագրական նկարագրությունը, ինչպես նաև պաշտպանական կառույցների՝ ամրոցների և բերդերի դիրքերը, հնարավոր կամ սպասելի դիմադրության կազմակերպման աստիճանը, բնակչության խտության պատկերը և այլն:

¹ J.L. Bacqué-Grammont, Etudes turco-safavides, IV. Une description ottomane du Saatabago vers 1520, "Bedi Kartlisa" vol. XXXVI, Paris, 1978, pp. 149-166.

² «XVI դարի առաջին քառորդի թուրքական աղբյուրները Սամցխե-Սաաթաբագոյի պատմության վերաբերյալ», թուրքական վավերագրերը վրացերեն թարգմանությամբ, ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով հրատարակեց Ֆիսանա Աբուլաձեն, Թբիլիսի, 1983 (վրացերեն):

Վավերագրի աղբյուրագիտական քննությամբ պարզ է դառնում, որ այն Ղուարդուարե III-ի իշխանության տարիներին (1516-1535), սուլթան Սելիմի մահից հետո (1520) կազմված և Օսմանյան կայսրության կենտրոնական իշխանություններին հասցեագրված մի զեկուցագիր է, որտեղ նախանշվում է Դիարբեքիից Սամցխե-Սաաթաբազո կատարելիք զորարշավի ժամանակ բանակի երթի հիմնական ուղին: Հիշյալ ժամանակաշրջանում աթաբեկությունը վերածվել էր թուրք-պարսկական հակամարտության գոտու, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր հաստատել իր գերիշխանությունը:

1515թ. սուլթան Սելիմ Ահեդի՝ դեպի Պարսկաստան կազմակերպած արշավանքի և Չալդրանի մոտ տաքած հաղթանակի հետևանքով շահ Իսմայիլի հետ կնքված զինադադարի համաձայն Օսմանյան կայսրության տիրապետության տակ անցան նոր տարածքներ՝ ներառյալ Կարինը: Արևելյան սահմանների ընդլայնմամբ Թուրքիան ընդհուպ մոտեցավ Սաաթաբազոյի տիրույթներին և սկսեց զործնականորեն միջամտել աթաբեկության ներքին խնդիրներին: Այլևայլ պատճառներով ու նկատառումներով վրաց իշխանավորների մի մասը հակվեց դեպի Սեֆևյան Պարսկաստան, մյուսը՝ Օսմանյան Թուրքիա:

Պատմական այսպիսի իրավիճակում, 1516թ. թուրքական կողմնորոշում նախապատվող աթաբեկ Սգեճաբուկի մահից հետո, Սամցխեի աթաբեկ կարգվեց նրա եղբորորդի Ղուարդուարե III-ը, որը հակառակ նախորդի, գերազանցապես ապավինում էր պարսկական ուժերին³: Ղուարդուարեի վարած իբանամետ քաղաքականությունը պատճառ դարձավ նրա հակառակորդ, մյուս եղբորորդ՝ Մանուչարի ապստամբության համար, ինչից անմիջապես վարձեց օգուվել Օսմանյան կայսրությունը՝ չտալեց միջամտել Ամսցխեի առավել ազդեցիկ Ջաղեյի-Ցիխիսջ-վարեի ավատական տան ներսում ծագած երկպառակությանն ու Բաբերդի սանջակի կառավարիչ Կըզըլ Ահմեդ օղլու Միրզա բեյի գլխավորությամբ, Մանուչարին օգնություն ցույց տալու նպատակով, աթաբեկության վրա մի զորախումբ ուղարկեց⁴: Չեռնարկված հարձակումը, սա-

³ Ծ.Քըրզըօղլուի ներկայացմամբ Սգեճաբուկի մահից հետո աթաբեկ կարգվեց Մանուչարը, որը ոչ թե նրա եղբայրն էր, այլ՝ որդին, մինչդեռ Սգեճաբուկի եղբայրը Ղոսսրդուարին էր: Տե՛ս M.Fahrettin Kırzioğlu, *Osmanlılar'ın Kafkas-Elleri'ni fethi* (1451-1590), Ankara, 1993, s. 116. Շչգրտված տոհմաձառը տե՛ս Ցիսանա Աբուլածե, ճշվ.աշխ., էջ 43:

⁴ Ծ.Քըրզըօղլուն դեպքերի զարգացումն այլ կերպ է պատկերում. 1516թ. Ղուարդուարեն, պարտվելով իր և աթաբեկ Մանուչարի միջև տեղի ունեցող պայքարում, օգնության խնդրանքով զալիս է այդ ժամանակ Նախիջևանում գտնվող շահ Իսմայիլի մոտ, որը և իր զորավարներից մի քանիսին հրամայում է հարձակում գործել Սաաթաբազոյի վրա: Հակառակորդի թվական

կայն, հաջողություն չունեցավ, և Թուրքիան միառժամանակ ստիպված ելավ լալայալ տալ կայսրության արևելյան սահմանները դեպի Անդրկովկաս ընդլայնելու ձգտումներին:

Թեև XVI դ. 20-30-ական թվականներին Օսմանյան կայսրությունն աթաբեկության նվաճման համար այդպես էլ ռազմական ակտիվ գործողություններ չծավալեց, ինչից, ի դեպ, խուսափում էր մաս Պարսկաստանը, ներկայացվող զեկուցագիրը վկայում է այդ տարիներին Բարձր Դռան կողմից մշակվող լուրջ ծրագրերի մասին:

Վավերագրում Դիարբեքիից մինչև Սաաթաբագոյի շրջաններ տանող հիմնական ճանապարհի նկարագրումն անշուշտ փաստում է Դիարբեքիի՝ իբրև բանակի մեկնակետ լինելու հանգամանքը, ուստի ենթադրելի է, թե արշավանքի կազմակերպումը տեղի կառավարչին էր հանձնարարված: Եվ, հիրավի, աղբյուրներից մեկի վկայմամբ 1525թ. սուլթան Սուլեյման Կանունու կողմից Դիարբեքիի վալի Խյուսրև փաշային Պարսկաստանի դեմ զորարշավ կազմակերպելու մասն հանձնարարականներ իրոք տրվել են¹: Նախապատրաստվող արշավանքի առավել հավանական ժամկետները, սակայն XVI դ. 30-ական թվականներն են: Բացի այն հանգամանքից, որ 1534թ. թուրք-պարսկական հերթական պատերազմի ընթացքում (1531-1535) Հալեպում գտնվող Իբրահիմ փաշան խոստացել էր Դիարբեքիի ժամանելուն պես հարձակում գործել Սաաթաբագոյի վրա², փաստաթղթում հիշատակվող Բասեսնի արևելյան շրջանների տիրակալ Քանթուրալըն այդ նույն տարեթվերի գործող անձ է³:

Ի տարբերություն նկարագրվող ճանապարհի սկզբնամասի, վերջին հատվածը՝ աթաբեկության տարածքը, ճանապարհները, միմյանց սահմանակից շրջանները, բերդաքաղաքների ու ամրոցների գտնվելու վայրերը և այլն առավել հանգամանալի է ներկայացված: Սաաթաբագոյի տեղանքի այսչափ լավ իմացությունն ու ճանաչումը հիմք է տալիս կարծելու, որ հեղինակը կարող է տարածաշրջանում Օսմանյան կայս-

գերակշռությունը տեսնելով, Սանույարը մախ թաքնվում է Վել գյուղում, պալա՝ փախչում Օսմանյան կայսրություն: Միայն հաջորդ տարի՝ ձմռանը, երբ շահ Իսմայիլը վերստին հաստատվեց Նախիջևանում, իսկ սուլթան Սուլեյմանը Եգիպտոսի արշավանքում էր, Սանույարը Կըզըլ Ահմեդ օղլուի զորքերի օգնությամբ վերահաստատման փորձ կատարեց: Տե՛ս M.Fahrettin Kirzioğlu, Գշվ.աշխ., էջ 115:

¹ Feridün Beg, Münseâtî's-Selâtin, I, İstanbul, 1274/1858, pp. 543-544, Տե՛ս J.L.Bacqué-Grammont, Գշվ.աշխ., էջ 150:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս M.Fahrettin Kirzioğlu, Գշվ.աշխ., էջ 233: Ց.Աբուլաճեն վկայակոչում է 30-ական թվականներ թելադրող այլ աղբյուրներ ևս (տե՛ս Գշվ.աշխ., էջ 29-30):

րության գերիշխանության հասաւաւտումը ողջունող տեղացի ազնվականներից մեկը լինել: Քաղաքական պայքարի ոլորտ ներքաշվելով, տեղի իշխանատենչ ավատական ավագանին, սեփական նկատառումներով, հաճախ էր համագործակցում կամ Օսմանյան կայսրության, կամ էլ շահական Պարսկաստանի հետ, պարբերաբար տեղեկություններ հաղորդում երկրի ներսում իշխող տրամադրությունների և ընդհանուր իրադրության, տեղի ունեցող անցուղարձերի, նախապատրաստվող ձեռնարկումների և այլ պարագաների վերաբերյալ, փաստորեն վերաճում տվյալ պետության գործակալի⁴:

Ստորև ներկայացնում ենք օսմաներեն այդ վավերագրի թարգմանությունը՝ ձեռքի տակ ունենալով Ժ.Լ.Բակե-Գրամոյի և Յ.Արուլաձեի գույգ վերծանություններն ու ծանոթագրությունները, ինչպես նաև վավերագրի նմանահանությունը: Տեղանուններն ու անձնանունները տրվում են բնագրային տեսքով, հայերենի ընտանի հնչյունը բերում ծանոթագրություններում: Քարտեզը կազմել ենք առկա հայագիտական, վրացագիտական և թուրքագիտական գրականությունն աչքի առաջ ունենալով:

Նա

Կարա Ամիդից¹ և Չափակչուրից² [Աստուծով] պահպանյալ ճանապարհը [հասնում է] մինչև Մուշաբադի³ ձախ կողմում ընկած Բինգյոլ կոչվող լեռնարտաը⁴: Հաղթական բանակի մարտական երթի դեպքում նրանց միջև ընկած տարածությունը միայն տասնհինգ օրվա անցնելու ճանապարհ է⁵: Բինգյոլ կոչվող լեռնարտաից դեպի Վրաստան [ճանապարհն] անցնում է Փասունի դաշտավայրի⁶ միջով, Ավնուկ⁷ կոչվող ամրոցի ձախ կողմով, Չոբանի կամրջի⁸ մոտով, թերևս անգամ Չոբանի կամրջի վրայով:

Վրաստան երկիր⁹ ոտք դնելիս, աջ կողմում անցնում է Դուրդուրա¹⁰ կոչվող անհավասար ազնավուրներից Քանթուրալը¹¹ կոչեցյալի սահմանը: Այդ տարածքները նրա կալվածքն են: Քուր¹² կոչվող ամրոցից մինչև Սափնիկ¹³ կոչվող վայրը երկու հարյուր գյուղ կա: Ինչ վերաբերում է Քուրին, ապա այն փոքր ամրոց է: Տեղանքի մի հատվածը զգալի թեքության վրա է, սակայն այն չի կարող դիմադրել լուրջ հարվածի: Նրանց միջև ընկած գյուղերը մեծ մասամբ պատկանում են Քանթուրալ կոչվող անհավատին, իսկ մյուս մասը՝ Ազուն օղուլար անվամբ հայտնի ազնավուրներին է, մի քանիսն էլ Դուրդուրայի խասերն են: Քանթուրալ կոչվող անհավատը միայնակ չէ, [նա] պետք է որ մի քանի եղբայր ունենա:

⁴ Տե՛ս Յ.Արուլաձե, նշվ.աշխ., էջ 73:

նաս մուտք գործելու, կանցնես Թավելի¹⁵ կոչվող գավառի ծայր սահմանը: Այս Թավելի գավառը մույնպես բազմամարդ և ընդարձակ երկիր է: Թավելիի տարածք մուտք գործելիս սկզբում գտնվում է Շեքերլու¹⁶ կոչվող հայտնի վայրը, որը Մամուրվան ամրոցի¹⁷ կալմերում է: [Այստեղ] խտուն ու ջուրն առատ են, լեռնարոտները՝ կանաչաշատ, որսատեղերը՝ բազում և ընդհանրապես՝ գեղեցիկ վայրեր են: Հիշատակված Մամուրվանի ամրոցը մի վտքրիկ ամրոց է¹⁸: Ամրոցի պարիսպը սարի լանջով բարձրանում է մինչև գագաթը: Շեքերլու կոչվող նահիեից հոսող գետը¹⁹ նրա մոտով է անցնում: Հիշատակված Մամուրվանի ամրոցը Դուրդուրա բեյի խասն է, սակայն ժամանակավորապես հանձնված է իր կառավարչին՝ Ներիման կոչվող ազնավուրին: Նրան աջ կողմից հարակից Հիմյաղար²⁰ անվամբ հայտնի նահիեն և ամրոցը այս Ներիմանի երկիրն է: Հիշատակված Ներիմանի երկիրը [բաղկացած է] քառասուն-հիսուն գյուղից: Այսպիսով, վերի կողմում գտնվող, Դուրդուրայի տիրույթ Վրաստանի երկրները սրանք են, որոնք և հիշատակվեցին:

Այս հիշատակված երկրներից դեպի ձախ, մեկ անգամ իջևանելու հետավորության վրա Թորթումի ամրոցն է²¹: Այդ շրջանն անվանվում է Խախտի²² կիրճ: Շատ գեղեցիկ տեղեր են: Սրանից բացի՝ մի քանի փոքր բերդեր էլ կան: Մեկը կոչվում է Աղչա-կալե²³: Այս Թորթումի ամրոցը սկզբնապես Դուրդուրայինն էր, բայց ժամանակավորապես Զորեսենի ձեռքն է անցել: Զորեսենի հիմնական հին բերդն Աղչա-կալեն էր: Հիշատակված այս ամրոցները ներկայիս գտնվում են Ռուստեն անվամբ մի անհավատ ազնավուրի ձեռքում: Այս Խախտի շրջանը հայտնի է նաև Իշխանլար²⁴ անվամբ: Այստեղ մոտավորապես հարյուր գյուղ կա, նրանց թվում քսան-երեսուն մանր ազնավուրներ կան՝ անկախ անհավատներ:

Հիշատակված շրջաններ մուտք գործելու վայրերն են՝ Օվաջիկի²⁵, Իսպիրի²⁶ և Վեսիրիկի²⁷ կողմերը: Սրանք՝ սկզբից մինչև հիմա հիշատակված [տարածքները], Վրաստան երկրի սահմաններն են: Վրաստանի երկիր մուտք գործելիս բանակը պետք է անցնի այս հիշատակված տարածքներով: Սրանք այստեղ ավարտվեցին:

Քիչ վերևում հիշված Մամուրվանի ամրոցի ստորոտից դեպի Օլթի կոչվող բերդը²⁸ մի գետ է հոսում²⁹: Օլթիի բերդ հասնելիս վայր ես իջնում: Այս Մամուրվան բերդից մինչև Օլթի բանակի համար մեկ օրվա անցնելու ճանապարհ է³⁰: Ե՛վ այս Օլթիի բերդը, ե՛վ Մամուրվանի բերդը Դուրդուրայի խասերն են: Հիշատակված Օլթիի բերդը նախկինում Թավելիի քաղաքն էր: Այս Օլթի բերդը գտնվում է Թավելիի կազմում: Այս Թավելին [սխտ] բնակեցված ու բարգավաճ է՝ մոտավորապես երկու հարյուր գյուղ կա: Տեղանքն ուղիղ է և հարթ: Այս շրջանի լեռներն ու հարթավայրերը հույժ բարեկարգ են:

Սրանից հետո, Վրաստանի Ախալքալի³¹ ուղղությանը, Փենեք³² կոչվող մի տեղանք էլ կա: Այնտեղից մինչև Փենեք երկու անգամ կայս-նելով կհասնես: Այս Փենեք գյուղի³ մեջ մի եկեղեցի կա³⁴, այն վզի պես երկարածի՞զ ձև ունի: Այն ևս պատկանում է Թավելիին:

Սրա և սրանից այն կողմ գտնվող Արդահան կոչվող երկրի³⁵ միջև հսկա մի գառիվեր կա³⁶ վստահաբար մեկ օրվա անցնելու ճանապարհ է: Դադար առնելու հարմար տեղ է: Այնտեղից անցնելիս Արդահան կոչվող երկիր կիջնես: Արդահանի հարթավայրը Վրաստան երկրի գեղատեսիլ վայրն է: Մինչև Թյումուկի ամրոց³⁷ երեք հարյուր գյուղ կա: Փառավորա-պես շեն է և բնակեցված՝ կանաչածածկ, ջրառատ և մարգագետիններով հարուստ տեղեր են:

Արդահանի ձախ կողմում գտնվում են Շավչաթն³⁸ ու Արդանու-ջը³⁹: Արդանուջի բերդը⁴⁰ փոքր է: Մոտ անցյալում Դուրդուրան այն խլեց իր հորեղբոր որդու՝ Հովսեփ քեյի⁴¹ ձեռքից: Նրանից այն կողմ, Չորուխ գետի⁴² երկու կողմերում՝ ստորին հատվածում, Աջարա⁴³ և Մուրդուլի⁴⁴ շրջաններն են: Այդ ստորին հոսանք կհասնես, և ճանապարհն էլ ավարտվում է:

Դեպի ետ՝ վերնամասում Արդահանն է, որ արդեն հիշատակվեց: Այստեղ տանող մի ճանապարհ ևս կա, որով նախկինում Յաղուր փաղի-շահը⁴⁵ Աղշղայի վրա սուրբ պատերազմի էր գնում: Այս ճանապարհով կմտնես [և] դուրս կգաս: Սա Դումլուջա կոչվող հայտնի ճանապարհն է: Սրանից բացի, այս Արդահանի հարթավայրով [անցնող] մի ճանապարհ էլ կա, որը հասնում է Թյումուկ կոչվող բերդը: Այս Թյումուկի բերդը ևս Վրաստան երկրի հայտնի և ամուր բերդերից է: Սրա վերևի կողմում, Թյումուկ գետի վրա, լայնարձակ մի ամրություն կա: Նախկինում, սուլթան Սելիմ⁴⁶ խանի օրոք, Դըզըլ Ահմեդ օղլու Էմիրզա քեյի⁴⁷ Վրաստան ար-շավելու ժամանակ, Մուրխան անունով անհավատը, որը Դուրդուրայի աներն էր, իր գերդաստանով և ժողովրդի հետ [այս] քարանձավում էր: Քորեսենի ընտանիքն ու ժողովուրդը ևս նրա հետ էին: [Էմիրզա քեյը] մի քանի ազնավորներ գերելով՝ նրանց այնտեղից դուրս է հանել: Քորեսե-նի երջանկության շնորհ⁴⁸ գալու հիմնական պատճառը այդ քարանձա-վից [նրա] ընտանիքի ու ժողովրդի դուրս բերումն ու առանց իրեն տեղ-յակ պահելու Երջանկության շնան ուղարկելն էր: Քիչ անց՝ ինքն էլ իր որ-դիներով հանդերձ ուղարկվեց:

Դարձյալ Թյումուկ գետի վերևի կողմում Քիլիշա⁴⁹ անվամբ մի անառիկ բերդ ևս կա: Այն նույնպես պատկանում է Թյումուկի նահիեին: Թյումուկ բերդի տիրոջ անունը Ռզրար է. [նա] Դուրդուրայի աներ Մուր-խանի եղբորորդին է և [այդ] Դուրդուրա կոչվող անհավատի չափազանց հույժ ազնավորներից է:

Այս Թյումուկի նահիեից Ղըզըլբաշի երկրի ուղղությամբ⁵⁰ Ջևահաղ⁵¹ կոչվող մի երկիր է: Հարթավայրոտ և դաշտաշատ տեղանք է, խիտ բնակեցված գյուղերով: Արդահանի երկիրը Վրաստանի առավել ընտիր վայրերից է: Այս գյուղերի հետ մեկտեղ, [այն] մի երկիր է, որտեղ գտնվում է Ազդուր կոչվող մի մեծ եկեղեցի⁵²: Սինչև նրան հասնելը մոտավորապես երկու հարյուր գյուղ կա:

Դեպի այս Ազդուր կոչվող եկեղեցին հոսող գետի⁵³ վերին մասում, Վրաստանի մայրաքաղաք Ախըշխա կոչվող քաղաքն է: Նրա շրջակայքում երկու հարյուր գյուղ կա:

Վրաստանի հայտնի և ճանաչված վայրերն ու երկրներն այս հիշատակված տեղերն են: Սրանից բացի, բազմաթիվ են նաև քիչ թե շատ նշանակալի այլ շրջաններն ու վայրերը, որոնք սակայն չհիշատակվեցին:

Այս Դուրդուրա կոչվող անհավատի ազգականներից և հպատակներից մեկը նրա հորեղբայր Մինուչիրն⁵⁴ է, որն այժմ քաշված է եկեղեցիներից մեկում: Նրա (Դուրդուրայի) հորեղբոր որդու անունը Յուվան բեյ է: Յուվան բեյը մի եղբայր ունի, որի անունը Քեյխյուսրեվ է: Մամր բեյերի անունները սրանք են, որոնք և հիշատակվեցին:

Նախ, Դուրդուրայի կնոջ եղբայրներն են Սուբխանի որդիները, որոնք հինգ եղբայր են: Նրանցից հրեցի անունը Դուքնա է, մյուս հորեղբոր որդու անունը Ռզբարը է: Ռզբարը Հունամ անունով եղբայր ունի: Սրանք իրենց հիմնական ծառայություններն իրականացնելուց բացի, շուրջ քստասունական-հիսունական ազնավորներ ունեն: Սուրխանը ևս մի եղբայր ունի՝ անունը Բյուկնկ: Նա մուկնպես մի քանի որդի ունի: Սրանից բացի, Ատդդուր անվամբ մի անհավատ էլ կա: Նա վերոհիշյալներին հակառակորդ անձնավորություն է: Բոլոր [նրանք] եղբայրներ ու որդիներ են և գուցե ավելին ևս: Այս հիշատակվածները միասին են: Անդարման անունով մի ազնավոր էլ կա, որին պատկանում է Ուղ⁵⁵ կոչվող շրջանը: Նա ևս նրանց հետ միասին է: Քանթուրալը անվամբ ազնավորը իր եղբայրներով հանդերձ և ամլախորը հայտնի տոհմից են: Նրա (ամլախորի) անունը Զյուար է: [Նա] շատ եղբայրներ ունի: Սրանք էլ բավական բազմանդամ համայնք են կազմում: Սրանց մեջ նա հայտնի անձնավորություն է: Նրա երկիրը տարածուն է՝ ընկած է հիշատակված վիլայեթից ներս և դուրս: Մեկն էլ Շմգան օղլուն է: Իր ազգականներով ու ընդձեռն մարդկանցով նա ևս մյուսներին համագոր է: Նրա երկիրը Ջևահաղ կոչվող տարածքն է:

Դուրդուրային հպատակվողները գերազանցապես նրանք էին, ովքեր հիշատակվեցին վերևում: Սրանից այն կողմ, Ազդուր կոչվող եկեղեցու մոտից դեպի Վրասաան երկրի կողմը գետ է հոսում⁵⁶: Սա Վախտանգ Մելիքի երկիրն է, որը Էմիրզա Ջաբուկի⁵⁷ քրոջ որդին էր:

[Նա] մահացած որդիներ էլ ունեն: Նրանք տիրում էին իրենց մախնի-ների երկրին:

Նրանից այն կողմ Թիֆլիսի իշխանությունն է, իսկ ավելի հեռու՝ Շեքիի քեյ՝ Լեվենդ քեյինը⁵⁸: Նրանից ներքև, ծովի ուղղությամբ Ջուֆա-քիսի թագավորն է⁵⁹: Այստեղ սուլթան Սելիմ խանը սուրբ պատերազմ էր վարում: Այս Դուրդուրա կոչվողն անհավատների իշխանապետ էր:

Նրանից ավելի ներքև Գյուրեւն է⁶⁰, որը սահմանակից է Տրաքզո-նին: Նրանից այն կողմ մինչև Սուխում կոչվող [քաղաքը], որտեղ հնա-գույն ժամանակներից սկսած մավահանգիստ կար, և մինչև Էլբրուս լե-ռան ստորոտը Դադյանի տարածքն է: Այն կողմ Աբխազիայի երկիրն է: Լեռների հետևում. մինչև Դեմիր Քավտու [ընկած են] Չերքեզների երկր-ներն ու Լեկեզիստանը: Սրա հարավային կողմում Շիրվանի երկիրն է:

Վերջ

SAMVEL MURADYAN

AN OTTOMAN DOCUMENT OF THE XVI CENTURY

By publishing a document, which was kept in the archives of the Council of Ministers in Stambul (Feket found, N 134) J.L.Bacque-Grammont, a French orientalist put into circulation an historical document concerning to the Samtskhe principality (Saatabago).

The sourceal examination of the document makes clear that it is a report, which was written in the period of ruling of Khuarkhuare III, after the death of sultan Selim, in 1520. It indicates the basic way and route of the turkish army, which had to pass from Diarbekir to Saatabago, through Tchapakdjour, Mush, Basen valley, Tortum, Olti, Mamurvan, Banak and Ardahan, describes the separate settlements, defences, castles positions, gives the density of population etc.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կարա Ամիդը այժմյան Դիարբեքիր քաղաքն է:
2. Ճապաղջուրը (Չափակչուր, Չեքաքջուր, Ճապաղճուր, Ճաքաքջուր) մույմացվում է ներկայիս Բինգյոլ քաղաքի հետ: Տե՛ս J.L.Bacqué-Grammont, մշվ.աշխ., էջ 155: Գտնվում է Արածանու և Ճապաղջուր գետի (Գինեկի) միախառնման վայրից հյուսիս՝ աջ կողմում: Էվլիա Չելեբու վկայմամբ Ճապաղջուրի ամրոցի կառուցման ավանդությունը կապվում է Ալեքսանդր Անծի հետ: Տե՛ս Էվլիա Չելեբի, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատ. Գ, Թարգմանությունը քննարկից, առաջարան և ծանոթագրություններ Ա.Խ.Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 165-167:
3. Խոսքը Աուշի մասին է:

4. Ճապադջուր (Գինեկ) գետի և Արածանու միախառնման վայրի ավազանում, Մշո դաշտից արևմուտք տարածվող Ճապադջուրի դաշտն է: Ընկած է Բյուրակն-Մնձուրյան լեռնաշխարհի և Հայկական Տավրոսի միջև:
5. Վավերագրի հեղինակը, հավանաբար, նկատի ունի Ամիրդից մինչև Սամցխե-Սաաթաբագոյի սահմաններն ընկած տարածությունը, քանի որ Դիարիքից Բինգյոլ տանող ճանապարհը (շուրջ 270 կմ) հեշտ հաղթահարելի է և այդչափ ժամանակ չի պահանջում:
6. Էրզրումից արևելք, Արաքս գետի հոսքի ուղղությամբ ձգվող Բասեանի դաշտն է:
7. Ավնիկի ամրոցը գտնվում է Վերին Բասեան գավառի հարավային սահմանագլխին: 1054թ. սելջուկների կողմից «անառ ամրոցն որ կոչի Աննիկ» գրավման ու ավերման մասին վկայում է Արիստակես Լաստիվերցի: Տե՛ս Պատմություն Արիստակիսի Լաստիվերտցույ, աշխատասիրությամբ Կ.Լ.Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 89:
8. Այսօրփս Քյոփրուքոյից ոչ հեռու գտնվող և «տելի քան զ700՝ յերկայնութիւն և իբր 30՝ ի լայնութիւն» ունեցող Չոբանդեղե կոչվող կամուրջն է, որի ճարտարապետական կերպի, կառուցման, հետագա վերանորոգումների և հարակից շինությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններն ի մի է հավաքել Ղ.Ալիշանը: Տե՛ս Հ.Ղ.Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 24: Կամրջի մասին հիշատակություններ ունեն մահ Է.Չելեքին (տե՛ս Է.Չելեքի, նշվ.աշխ., էջ 67) և Քեաթիք Չելեքին (տե՛ս «Թուրքական աղբյուրները...», կազմեց Ա.Խ.Սաֆրաստյան, հ. Բ, Երևան, 1964, էջ 26):
9. Բնագրում օգտագործված է کورجستان دیاری (Gürcistan diyâri) անվանաձևը:
10. Սաաթաբագոյի կառավարիչ Ղուարդուարե III է (1516-1535):
11. Բասեանի արևելյան և հյուսիս-արևելյան շրջաններում իշխող սիփահիներից էր Արըզ Բաթրի որդին:
12. Քուբ կոչվող ամրոցը պետք է գտնվելիս լինի Չոբանի կամրջից արևելք: Հնարավոր է, որ այն Ղուբնուկ (այժմյան Խոպիկ) ամրոցի հետ է նույնանում:
13. Սափնիկը, ամենայն հավանականությամբ, նույն Թորթում գետի վերին հոսանքի ավազանում գտնվող Շիպեկ կոչվող բնակավայրն է:
14. Կաղզվանի մասին տե՛ս Հ.Ղևոնդ Ալիշան, նշվ.աշխ., էջ 45; Ս.Տ.Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963; Հ.Մ.Էսփոհեան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1907, էջ 263; Հ.Նեղոսե Սարգսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 216-217:
15. Թուրքական աղբյուրներում Թավելի (Dav (Tav) - Eli) ձևով հիշատակվող երկիրը Ճորոխի միջին հոսանքի և նրա աջակողմյան վտակների ավազաններում տարածվող Տայք աշխարհն է: Տե՛ս M.Fahrettin Kirzioğlu, նշվ.աշխ., էջ 45, մահ՝ Յ.Արուստե, նշվ.աշխ., էջ 34-40:
16. Բնագրում օգտագործված է ոչ թե Շեքերլու, այլ Շեքեզլու ձևը: Տե՛ս J.L.Bacoué-Grammont, նշվ.աշխ., էջ 158:

17. Էրզրումից դեպի հյուսիս-արևելք, Օլթու գետի ձախ կողմում գտնվող ներկայիս Նարման գյուղաքաղաքն է։ Աղբյուրներում հիշատակվում է Մամրվան, Մամուրան, Նամրասն, Նարիման, Մամերվան և մի այլ ձևերով։ Տե՛ս Հ.Յ.Տաշլան, Տայք, Դրացիք եւ Խոտորջուր, հ. Ա, Վիեննա, 1973, էջ 181։
18. Ըստ Է.Չելեքու Մամուրվանի ամրոցը կառուցվել է մի վրացի քեյի կողմից և գերազանցապես եղել մահմեդարնակ։ Տե՛ս Է.Չելեքի, նշվ.աշխ., էջ 114, նաև՝ Ղ.Իմճեհնևան, Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, մաս Ա, Վենետիկ, 1806, էջ 126։ Այս քնակավայրի հիշատակությանն ենք համղիպում «Դաթի և Տիրիճանի վկայաբանության» տեքստում (տե՛ս «Բանբեր Սատենադարանի», 9.12,1977թ., էջ 185)։
19. Օլթու գետի վտակներից մեկն է։
20. Է.Չելեքին Աղդահանի մոտ եղած քերդերը թվարկելիս հիշատակում է Հեմագար կոչվող քերդը (տե՛ս նշվ.աշխ., էջ 113)։ Այն պետք է որ Հիմյաղարի հետ նույնը լինի։
21. Թորթումի ամրոցը (Տայքի Ոքաղե գավառ) համանուն գյուղաքաղաքի հյուսիսային կողմում, գետի ձախ ափին գտնվող փոքրիկ մի քերդ է։ Տե՛ս Ղ.Իմճեհնևան, նշվ.աշխ., էջ 93-94։ Է.Չելեքու մոտ պահպանվել է քերդի մանրամասն նկարագրությունը։ Տե՛ս Է.Չելեքի, նշվ.աշխ., էջ 128։
22. Հեղինակը նկատի ունի Թուրթումի շրջանում, համանուն գետի ձախակողմյան հատվածում մինչև Օլթու գետի հետ միախառնման վայրն ընկած տարածքը։ Այստեղ է գտնվել Խախտ (Խախու, Խախուլ) կոչվող գյուղը։
23. Թորթումի շրջանի առավել հայտնի քերդերից է, գտնվում է Թորթումի արևելյան կողմում։ Ըստ Է.Չելեքու Աղչա-կալին (Ընկույզի քերդ) Ուլամե փաշայի կողմից կառուցված և 600 տնից քաղկացած մի ամրոց էր։ Տե՛ս Է.Չելեքի, նշվ.աշխ., էջ 125։ Ֆ.Ջըրգզողուն իրավացիորեն այն նույնացնում է ներկայիս Ումգյուզեկի (Ընկյուզեկ) կամ Ունգեզեկի հետ։ Տե՛ս M.Fabretti Kirzioglu, նշվ.աշխ., էջ 200։
24. Ժ.Լ.Բակե-Գրամոնյի գրադարձած տեքստում օգտագործված է Իշխանալ (İşhânal) ձևը։ Տե՛ս J.L.Bacque-Grammont, նշվ. աշխ., էջ 152։ Օլթու գետի հոսանքի վերին ձախակողմյան հատվածում գտնվում էր Իշխանաց գյուղը, որից էլ հավանաբար գալիս էր այդ շրջանի անվանումը։ Գյուղի մասին տե՛ս Ղ.Իմճեհնևան, նշվ.աշխ., էջ 130։
25. Էրզրումից դեպի հյուսիս-արևմուտք, Սպեր գավառի հարավ-արևելյան մասում գտնվող, արևմուտքից հյուսիս ձգվող դաշտառատ փոքրիկ մի գավառ է։ Թ.Հակոբյանը Օվաջիկի դաշտը, հետևաբար նաև՝ շրջանը, նույնացնում է Շադագոմքի հետ։ Տե՛ս Թ.Խ.Հանոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 493։
26. Շորոխ գետի միջին հոսանքի շրջանում տարածվող Ապեր գավառն է։ Հեղինակը, հավանաբար, նկատի ունի ոչ այնքան գետի աջ ափին գտնվող Սպեր (ներկայիս՝ Իսպիր) քաղաքը, որքան շրջանը։
27. Վեսիրիկը, ըստ ամենայնի, Թորթումից դեպի արևմուտք գտնվող Քեսիրիկ կամ Քասիրեկն է։

28. Օլթու գետի միջին հոսանքի շրջանում գտնվող Օլթի քերդաքաղաքն է: Բերդը նկարագրում և նրա մասին որոշակի տեղեկություններ է հաղորդում Զ.Քոխը: Տե՛ս Karl Koch, Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844, II, Reise im pontischen Gebirge und türkischen Armenien, Weimar, 1846, s. 248.
29. Նարիմանի աջ կողմով հոսող Օլթու գետն է:
30. Նրանց միջև ներկայիս գործող ճանապարհն ունի 34 կմ երկարություն:
31. Խոսքն Ախալցխիսի մասին է: Տեղի հայության միջավայրում կենցաղավարող Ախախա և Ախցխա հնչումները գալիս են թուրքական արտասանական ձևից:
32. Փենեկ (Բանակ, Ֆենեք, Փանակ) գավառը տարածվում է Օլթու գետի աջակողմյան համանուն վտակի միջին հոսանքի ավազանում:
33. Գյուղն ընկած է Օլթի քերդաքաղաքից մոտավորապես 30 կմ դեպի հյուսիս-արևելք: Ժամանակին այն եղել է եպիսկոպոսանիստ կենտրոն: Տե՛ս Հ.Յ.Տաշեան, նշվ.աշխ., էջ 45:
34. Բանակի նշանավոր եկեղեցին մինչև 1789թ. կանգուն է եղել: Եկեղեցու մասին որոշակի տեղեկություններ է հաղորդում Զ.Քոխը: Տե՛ս Karl Koch, նշվ.աշխ., էջ 243:
35. Արդահանի շրջանը (պատմ. Գուգարաց աշխարհ) տարածվում է Կուր գետի ակունքների շրջանում, արևելյան կողմում սահմանակից է Ջավախքին: Գավառն այսօր կազմում է Կարսի մարզի հյուսիս-արևմտյան հատվածը:
36. Այս շրջանները միմյանցից քաժանված են հարավից հյուսիս ձգվող Արսիանի-Անծրանց (Մոդանլուղի) լեռնաշխաթյով:
37. Թումուլը (Թումուկ, վրաց. Թուգվի) Կուր գետի ձախ ափին (Գուգարաց աշխարհի Ջավախք գավառ) գտնվող, XII դարից հայտնի Թմկաքերդն է:
38. Շավշեթը (Շեշատ) ընկած է Գուգարքի համանուն գավառի և գետի վերին հոսանքի ավազանում, Արսիանի լեռներից ձախ: Շավշեթ քաղաքը ներկայիս Յենիքոյն է:
39. Արդանուջը գտնվում է Շորոխ գետի աջակողմյան համանուն վտակի միջին հոսանքի ավազանում (պատմ. Գուգարքի Կղարջք գավառի կենտրոնամասում): Ներկայիս Ադակալին է:
40. Քաղաքի վրա իշխող քարձր քարաժայռին V-VI դդ. կառուցված ամրոց է: Բերդի նկարագրությունը տե՛ս Հ.Էփրեկհան, նշվ.աշխ., հ.1, էջ 317:
41. Իվանի քեյն է برانه بک:
42. Հայտնի Շորոխ գետն է:
43. Շորոխ գետի ստորին հոսանքի աջ կողմում, Ջեղա (= Վերին) Շավշեթի և Մեսխեթի լեռնաշխաթաների միջև ընկած Աջարիայի շրջանն է:
44. Մուրդուլիի շրջանը տարածվում է Շորոխ գետի ստորին հոսանքի ձախ կողմում՝ Արդվին քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք:
45. Ակկոյունլուների Յակուք սուլթանն է (1478-1490):
46. Սուլթան Սելիմ I (Ահեղ, 1512-1520):
47. Բաքիրդի, Երզնկայի և Դերջանի սամջակների կառավարիչ Դըզըլ Ահմեդ օղլու Միրզա քեյն էր, որին սուլթան Սելիմ I-ը 1515թ. Սամցխեի աթաբեկ

Մզեմարուկի մահից հետո, Ղուարդուարե III-ի և նրա հորեղբայր Մանուչարի միջև առաջացած հակամարտությունը հօգուտ վերջինիս լուծելու նպատակով ուղարկել էր Վրաստան:

48. Բնագրում օգտագործված է *استانه سعادت* (astane-i sa'âdet): Միջնադարում այն Կ.Պոլսի մեծարական անվանման ձևերից մեկն էր:
49. Օգտագործված գրականության մեջ այս ամրոցի վերաբերյալ որևէ տեղեկություն չենք գտել:
50. Հեղինակը նկատի ունի Պարսկաստանի ուղղությունը:
51. Խոսքը Գուգարաց աշխարհի Ջավախք գավառի մասին է:
52. Ազդուրը (Ածղոր, Ասկուրեթ) գտնվում է Ախալցխեից հյուսիս-արևելք: Եկեղեցու մասին կան բազմաթիվ վկայություններ:
53. Հիշատակվող գետը Կուրն է:
54. Ղուարդուարե III-ի դեմ մղած պայքարում Մանուչարի հիմնական սատարը Օսմանյան Թուրքիան էր, մինչդեռ նրա եղբորորդին ապավինում էր Սեֆևյան Պարսկաստանին:
55. Ուղ կամ Ուղե կոչվող շրջանն Ախալցխեին սահմանակից է արևմտյան կողմից, ընկած է Կուր գետի համանուն վտակի ավազանում: Կաթողիկե դավանությանը հարած նրա հայ բնակչությունը աստիճանաբար կորցրեց ազգային նկարագիրը և վրացիացավ:
56. Խոսքը Կուր գետին է վերաբերում:
57. 1502-1515թթ. Մամգլխեի աթաբեկ Միրզաճարուկն է: 1512թ. Էրզրումի սերասքյարի գլխավորությամբ աթաբեկության սահմաններ ներխուժած թուրքական բանակին սիրալիբ ընդունելություն ցուցաբերելով և հպատակություն հայտնելու միջոցով նա կարողացավ շրջանը զերծ պահել թախանից ու ավերումներից: Տե՛ս *M.Fahrettin Kirzioğlu*, նշվ.աշխ., էջ 88:
58. Կախեթի Լևան թագավորն է (1520-1574): 1521թ. նա արշավել և գրավել էր Շաքին, ուստի վավերագրում հիշատակվում է իբրև Շաքիի րեյ:
59. Զուրախի (Իմերեթիայի) թագավոր Բագրատ II է (1510-1548):
60. Ռիոն գետի ստորին հոսանքի ձախ կողմում ընկած Գուրիայի շրջանն է: